

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 2-ին, հինգշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը և Ալեքսանդրիայի ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քարոզիչ տ. Զավեն եպս. Չինչինյանը:

*
* *

Հոկտեմբերի 4-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Իրաքի հայոց առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանը և Իրաքի հայ կաթողիկե համայնքի առաջնորդ գերապայծառ տ. Հովհաննես արքեպ. Գասպարյանը:

*
* *

Հոկտեմբերի 5-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ աբղ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ ծանիցեն, զի դու ես Աստուած միայն, որ փառաւորեալ ես ի վերայ ամենայն Տիեզերաց» բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 6-ին, երկուշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է այցելում Նյու-Յորքի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տիկնանց միության անդամուհիներից բաղկացած մի խումբ:

Հարգելի տիկնանց բարեհաճում է ընդունել Վեհափառ Հայրապետը և տալ նրանց Իր հայրական օրհնությունը:

Նյու-Յորքի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տիկնանց միության ատենապետուհի տկն. Մայրենի Գալայճյանն այս ուրախ առիթով բոլորի անունից սրտի ջերմ խոսք է ասում՝ ուղղված Վեհափառ Հայրապետին.

«Վեհափառ Տեր,

Մեր խումբը Նյու-Յորքի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո տիկնանց միության անդամուհիներն են: Մենք ոմանց համար ասիկա մեր առաջին այցելությունն է: Բոլորս ալ տպավորված և հուզված ենք այս պահուն: Տարիներու մեր փափաքը և երազը իրականություն է դարձած այսօր:

Մեր կենդանի աչքերով կտեսնենք և

կապրինք այն բոլորը, որոնց մասին լսած էինք ուրիշներու կողմե: Զորեղ փորձառություն մը է ասիկա մեզի համար, որուն բարերար արդյունքները պիտի մնան մեզի հետ, մինչև մեր կյանքի վերջը:

Ներկա Հայաստանը խարիսխն է մեր ազգային գոյատևման, իսկ ս. Էջմիածինն՝ ալ անվիճելի հոգևոր կեդրոնը Հայաստանյայց եկեղեցվո: Մեր այցելությունը ավելի կզորացնե մեր հոգիներուն և մտքերուն մեջ այս երկու ճշմարտությունները:

Մեր վերադարձին ոչ միայն պիտի պատմենք մեր բարեկամներուն և զավակներուն մեր տեսածներուն մասին, այլ բաժնեկից պիտի ընենք զանոնք մեր համոզումներուն և հավատքին:

Վեհափառ Տեր, օրհնեցեք մեզի որպեսզի մենք զորացած, կարենանք շարունակել մնալ մեր հավատքին ու համոզումներուն մեջ և մանավանդ կատարել մեր առաքելությունը ուր որ կարիքը տեսնվի անոր»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Իր ջերմ գնահատանքն է հայտնում ներկաների եկեղեցասիրության և հայրենասիրության և մանավանդ տիկին Մ. Գալայճյանի սրտագին արտահայտությունների համար ու օրհնում նրանց եկեղեցանվեր աշխատանքները:

Վերջում բոլոր ներկաները աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը և հրաժեշտ տալիս Նորին Սրբությանը:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել նաև Սովետա-արգենտինյան բարեկամության ընկերության բարտուղար Գեուշման Խորխեին:

*
* *

Հոկտեմբերի 7-ին, երեքշաբթի.—Այսօր Վեհարանում տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Նիստին հրավիրվում են նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը, Իրաքի հայոց թեմի առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանը և Ալեքսանդրիայի ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քարոզիչ տ. Զավեն եպս. Չինչինյանը:

Վեհափառ Հայրապետը, հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, ջերմորեն ողջունում է սրբազանների ներկայությունը և բարի գալուստ մաղթում:

Այնուհետև խոսք առնելով տ. Բաբգեն, տ. Ասողիկ, տ. Զավեն սրբազանները համառոտակի խոսում են իրենց թեմերի եկեղեցական, մշակութային գործունեության և ապագա հոգևոր-կրթական կյանքի հեռանկարների մասին:

*
* *

Հոկտեմբերի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթը, որին ներկա է լինում նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հավաքույթի ընթացքում «Թուրքիայի արևելյան շրջանների ներկա կացության մասին» զեկուցումով հանդես է գալիս ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Դիարբեքիրի և ողջ Անատոլիայի հայոց հոգևոր հովիվ տ. Կիրակոս քհն. Թոքատրլյանը:

*
* *

Հոկտեմբերի 11-ին, շաբաթ.—Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն.

Այսօր Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվում է ս. պատարագ՝ ի հիշատակ Թարգմանչաց վարդապետների:

Պատարագում է Աշտարակի ս. Կարմրավոր եկեղեցու հոգևոր հովիվ տ. Կարապետ քհն. Հովնանյանը:

*
* *

Հոկտեմբերի 12-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Զավեն եպս. Չինչինյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Որ զգիտութիւն Քո զերկնային եւ զհոգեւոր իմաստութիւն արմատապէս ծաւալեցեր զեկեղեցիս Հայաստանեայց ի ձեռս սրբոց Թարգմանչաց» (շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* *
*

Նույն օրը, ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել շուրջ 50 հոգուց բաղկացած ստամբուլահայ ուխտավորների:

Հանուն ուխտավորների Վեհափառ Հայրապետին ուղղված սրտի ջերմ խոսք է ասում տիար Կարպիս Ուղուրլյանը.

«Վեհափառ Տեր,

Ամեն ազգ, ամեն հավաքականություն ունի իր սրբությունները, իր նվիրական արժեքները որոնք իր հավատքը, իր տեսլականը և հույսը կխորհրդանշեն, կյանքը կիմաստավորեն, թև ու սլացք կուտան իր հոգիին:

Աշխարհացրիվ հայուն համար ալ հավատքի անառիկ բերդ մը, աստվածային տեսիլքի մը հավերժացումը և իր հույսերուն մշտահոս աղբյուրն է ս. Էջմիածինը:

Ինչ որ ալ ըլլան իր ցավերը կամ նեղությունները, հույսի ճանանչ մը միշտ պիտի լուսավորե իր ներաշխարհը, որքան ատեն որ իր հոգեկան հորիզոնին վրա կանգուն մնա իր այս լուսաբեռը և գերագույն ապաստանը:

Ու մենք այսօր իբր երկյուղած ու ջերմեռանդ ուխտավորներ եկած ենք հաղորդվելու այս սուրբ կեդրոնին ուր կտրոփե ցեղին սիրտը: Պայծառացած են մեր հոգիները, վերանորոգված են մեր հույսերը, խանդն ու եռանդը. նոր կենսունակությամբ և թանկագին հիշատակներով պիտի վերադառնանք մեր երկիրը:

Ու այս լուսաձիր հիշատակներուն ամենեն շողշողունը պիտի ըլլա այս անմոռանալի պահը ուր Ձեր վեհ Անձին պատկերը քանդակված պիտի մնա մեր սրտերուն մեջ:

Հայ ազգն ու եկեղեցին բարեբախտ են Ձեր Վեհափառության նման իմաստուն և գերազնիվ հովվապետ մը ունենալուն համար, ու մեր սրտաբուխ և ամենաջերմ մաղթանքն է որ երկար և արփավետ տարիներու ընթացքին հայ ազնիվ հոտը Վեհիդ շնորհատու մականին ներքև իր պատմական բարեշրջումի գծով առաջնորդվի դեպի հոգեկան մշակույթի բարձունքները:

Որդիական խոր ակնածանոք մատչիմք ի համբույր ս. Աջոյդ»:

Հանուն ատամբուլահայության այնուհետև հետևյալ խոսքով իր սրտի հույզերն է արտահայտում նաև Արթո Ճյումսյուշյանը.

«Վեհափառ Տեր,

Այսօր, սա պահուս, Ձեր դիմաց ունիք սրտեր, որոնք մեկ ուրիշ հուզումով, մեկ ուրիշ երկյուղածությամբ կբաբախին՝ համակարգ ու ներդաշնակ նվագի մը, սրբասացության մը պես:

Անոնք իսթանպուլահայերու, Թուրքիա բնակող Ձեր որդիներուն սրտերն են, աշխարհի չորս ծագերեն հոս հասնող ուխտավորներեն բոլորովին տարբեր, բոլորովին ուրիշ կերպ, նույնիսկ անբացատրելի՛ կարոտով, սիրով և պաշտամունքով լեցուն են՝ հանդեպ ս. Էջմիածնի Մայր տաճարին, հանդեպ Հայրապետական Աթոռին և անոր շնորհազարդ Գահակալին:

Մանավանդ որ, մոտավոր անցյալին մեջ,—թեպետ տխուր պարագայի մը բերմամբ,—Ձերդ Վեհափառության Իսթանպուլ այցելության հիշատակը՝ անմոռանալի փարոսի մը նման միշտ վառ կմնա, ու քանի կհեռանա ժամանակի մեջ՝ անոր սփռած լույսը այնքան ավելի քաղցր, այնքան ավելի կարոտակեզ ու ցանկալի կդառնա մեր հոգիներուն:

Իսթանպուլահայ համայնքը, թեպետ զրկված Ձերդ Վեհափառության պարբերական օրհնաբեր այցելություններեն, սակայն միազանգված ու միաբան բոլորված՝ իր հայրախնամ սրբազան պատրիարքին շուրջ, կշարունակե իր խաղաղ ու բարոր կյանքը. մեկ կողմե՝ իբր օրհնապահ քաղաքացի՝ շինարար ոգիով և աշխատանքով կծառայե իր ծննդավայր երկրին, և մյուս կողմե՝ ոգի ի բռին կմաքառի և լիառատ նվիրաբերումներով կչանա՝ իր ազգային հաստատությունները, եկեղեցիները, դրպրոցները, որբանոցները, մանկանց բույնները, աղքատախնամները և մշակութային հիմնարկները կանգուն պահել, շեն պահել ու տևականացնել:

Այս հիգին մեջ, իր աննկուն կամքին և համառ աշխատասիրության քով, իր մեծագույն ապավենն է՝ նախ՝ քրիստոնեական իր սուրբ հավատքը, ու հետո՝ անսահման փարումը իր ազգային ավանդներուն, որոնց գերագույն խորհրդանիշն է Ամենայն Հայոց Հայրապետության Միածնաէջ ս. խորանը, ուրկե Ձերդ Վեհափառության տված պատգամները, ամեն առթիվ կուգան գոտեպնդել, խրախուսել ու ոգևորել բոլորը անխտիր:

Վեհափառ Տեր, այսօր ալ երբ մենք եկած ենք հոս՝ մեր հոգևոր կեդրոնը, ս. Էջմիածնի Մայր տաճարը քիչ մը ևս լուսազարդելու և յուրաքանչյուրիս հոգիեն բխող ուխտի մոմերով, կխնդրենք որ հաճիք ընդունել մեր բոլորին որդիական հավատարմության և սիրո վառ զգացումները, և Ձեր հայրապետական օրհնությունը շնորհեք մեզի ու մեր միջոցավ Ձեր թուրքիաբնակ բոլոր հարազատներուն:

Վեհափառ Տեր, վստահ ենք թե մենք՝ իսթանպուլահայերս, իբրև հարազատ որդիներ Հայաստանյայց ս. եկեղեցվո, մեր հատուկ տեղը ունինք Ձեր հայրագորով աղոթքներուն մեջ. կխնդրենք միայն որ աղոթեք նաև՝ որպեսզի անոնք ամենքն ալ արժանի ըլլան օր մը գալու, համբուրելու

Էջմիածնի ս. խորանը և Ձեր սուրբ Աջը՝ մեզի պես»:

Խորապես հուզված և հոգեպես մխիթարված վերջում Վեհափառ Հայրապետն Իր հայրական գնահատությանն է արժանացնում այս հուզումնալի և գեղեցիկ արտահայտությունները և Իր օրհնությունն է տալիս բոլոր ուխտավորներին:

Հայոց Հայրապետն Իր օրհնություններն ու ողջույններն է ուղարկում և՛ ս. Էջմիածնից, և՛ հայրապետական Իր սրտից նաև Կ. Պոլսի հայոց պատրիարք տ. Շնորհք արքեպ. Գալուստյանին և ողջ Թուրքիայի հայությանը:

* * *

Հոկտեմբերի 13-ին, երկուշաբթի.—Այսօր հյուրաբար Մայր Աթոռ է ժամանում Մոսկվայում նիդեռլանդների թագավորական դեսպան Յա. Լ. Ռ. Հյոյդեկոպեր Վան Նիհտեվեխտը՝ իր տիկնոջ հետ:

Հարգելի հյուրին բարեհաճում է ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հայրապետի և պրն. դեսպանի միջև տեղի է ունենում զրույց՝ ջերմ մթնոլորտում:

* * *

Հոկտեմբերի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթը, որին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը:

Հավաքույթի ընթացքում զեկուցում է տ. Տիրան աբդ. Կյուրեղյանը՝ ներկայացնելով Երեմեևի «Թուրքերի ծագումը» գիրքը:

* * *

Նույն օրը, հրաժեշտ առնելով Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից, իրենց պաշտոնատեղին են մեկնում Իրաքի հայոց առաջնորդ տ. Ասողիկ արքեպ. Ղազարյանը և Իրաքի հայ կաթողիկե համայնքի առաջնորդ գերապայծառ տ. Հովհաննես արքեպ. Գասպարյանը:

* * *

Հոկտեմբերի 16-ին, հինգշաբթի.—Այսօր, հրաժեշտ առնելով Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից, իր պաշտոնատեղին՝ Արգենտինա է մեկնում Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը:

* * *

Հոկտեմբերի 19-ին, կիրակի.—Զ կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում փոխ-լուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թադոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ զգեցեալ զզրահսն արդարութեան, ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան» (Եփես. Զ 15) բնաբանով:

* * *

Հոկտեմբերի 24-ին, ուրբաթ.—Այսօր Երևանի հայրապետական վիլլայում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Սույն նիստում որոշվում է նոյեմբերի 9-ին, կիրակի օրը, հանդիսավորապես նշել հայ մեծ բանաստեղծ և Գերագույն հոգևոր խորհրդի նախկին անդամ, Մայր Աթոռ ս. Էջմիածնի հարազատ զավակ ու հանգուցյալ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի և ներկա Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի անձնական բարեկամ Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակը:

Որոշվեց նաև դեկտեմբերի երկրորդ կեսին նշել, ըստ Վեհափառ Հայրապետի 1974 թ. մարտ 18 թվակիր սրբատառ կոնդակի, Ամենայն Հայոց Հայրապետության կիլիկյան շրջանի պատմության փառքի հիշատակը:

Այս առթիվ կազմվեց հոբելյանական հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին՝ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհաննես Թոփուզյանը և հոգևոր ճեմարանի դասախոս Սամվել Անթուսյանը:

* * *

Հոկտեմբերի 26-ին, կիրակի.—Է կիրակի զկնի ս. Խաչի. Գիւտ Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տիրան աբդ. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ս. Խաչ օգնական հաւատացելոց» (շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* *
*

Նույն օրը, օրվա մեծ տոնի առիթով, Երևանի ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թադոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է» (Ա Կորնթ. Ա 18) բնաբանով:

*
* *

Հոկտեմբերի 27-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ այցելեց շախմատի գծով աշխարհի չեմպիոն Անատոլի Կարպովը:

Հարգելի հյուրին, հանուն Վեհափառ Հայրապետի, Վեհարանում ընդունեց Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը և զրույց ունեցավ նրա հետ:

Սովետական տաղանդավոր գրոսմայստերն այցելեց Վեհարանի պատկերասրահ և հրաժեշտ առավ Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

*
* *

Հոկտեմբերի 28-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով Բուխարեստ մեկնեց Ալեքսանդրիայի ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քարոզիչ տ. Զավեն եպս. Չինչինյանը՝ Ռումինիայի և Բուլղարիայի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանի հետ, հանուն Վեհափառ Հայրապետի, ներկա լինելու ռումին օրթոդոքս եկեղեցու ավտոկեֆալության 90 և ռումին պատրիարքության հաստատման 50-ամյակներին նվիրված հանդիսություններին:

*
* *

Հոկտեմբերի 30-ին, հինգշաբթի.—Այսօր, ժամը 18-ին, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում Վեհափառ Հայրապետը ներկա եղավ մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

Հայոց Հայրապետին ընկերակցում էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և փոխ-լուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թադոյանը: